

Հ Ն Չ Ա Կ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ԿՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Ռ Ո Ւ Մ Բ Ը .

Թիւրքիան քաղաքակրթում է: Ինչպէս ըՍ- պանիայում ու Ֆրանսիայում, այնտեղ էլ ուում- բեր են ձգում: Եւրոպական մամուլը թէ հայա- սէր, թէ պաշտօնական, ամենքն ապշեցան, ամե- քը միաձայն կերպով յայտնեցին միեւնոյն կարծի- քը. — ումբարկութիւնն ամեն պարագային վնաս է հայկական դատի համար և «անիշխանական» գործողութիւնները բոլորովին անհամապատասխան են հայկական դատի ոգուն ու ձգտման, որ ազ- դային է: Մեծ Մարդասպանը, հաւատարիմ իր արիւնալի արհեստին, ութ հայ դատապարտեց մահուան... և գործադրեց: Եւրոպական մամուլը մնաց լուռ. մինչև իսկ ցաւակցական զգացման ար- տայայտութիւն չունեցաւ. — Գահիճը մորթել էր «հայ անիշխանականներ»... Ինչպէս Եւրոպան զլիսատում է եւրոպական անիշխանականներ: Գող՝ սիրտը դող, և եւրոպական հասարակական կարծի- քի արտայայտիչ մամուլն անկարող եղաւ «հայ անիշխանականների» մահուան առիթով մի ամենա- թեթեւ բողոք իսկ ուղղել սուլթանի դէմ: Որով- հետե եւրոպական երկիրներում նոյն կերպով են վարում իրանց անիշխանականների հետ եւրոպա- կան քաղաքակիրթ, «ազատամիտ» տերութիւննե- րը: Հեռուաբար, սուլթանը մեղանշած չէ և բը- նաւ էլ Մարդասպան չէ, երբ մահով է պատ- ժուում «հայ անիշխանականներին»: Այլ և ընդ- հակառակը. նա այդ բողոքին դադարում է մար- դասպան լինելուց և հանդիսանում է մեծ օրի- նապահ և հաւատարիմ օրինակող եւրոպական տէրութիւնների: Գրանք են եւրոպական մամուլի կարծիքներն՝ առաւել կամ նւազ պարզ կերպով արտայայտած: Գրանք են նաև նոյն իրան Մար- դասպանի յայտարարութիւնը, որ ուումբերի խընդ- րի առիթով արեց նա մեծ պետութիւններին: Ներքուստ համաձայն, այս վերջիններն արտաբուստ պահեցին առակի իմաստունի լուսթիւն: Այդքա- նըն էլ բաւական էր, որպէս զի նրանց և Ոճրա- գործի մէջ սակարկութիւն տեղի չունենար: Եւ չունեցաւ: Եւ բռնի մահով պատժեցան, սոս- կալի տանջանքի տակ, ութ հայ, որոնց յանցան- քը միայն այն էր, որ սիրում էին իրանց ազգը, և պատրաստ էին քաջաբար անձնազոհ լինել, բայց

չը զիտէին ինչպէս ծառայել նրա դատին և զուրկ էին հմուտ ու մտածող ղեկավարներից: Իսկ այ- նուհետև... այսօր արդէն, եւրոպական թերթե- րի ասուլթեամբ, ութ հարիւրից անցնում է Ս. Պոլսում ձերբակալած հայերի թիւը: Պատճա- ուր... Ո՛չ թէ պատճառը, այլ պատրւակը: Պա- տրւակ չեղած տեղը՝ սուլթանական կառավարու- թեան համար ոչինչ բան է ստեղծել այն: Այս անգամ սակայն պատրւակ ստեղծելու պէտք չը կար. որն ինքն էր ընկնում որսորդի ձեռքի տակ: Խեղցի յեղափոխականներն իրանք փող փչելով աջ ու ձախ վեհանձնաբար յայտարարեցին սուլ- թանին, թէ իրանց ամենամեծ գործերը դեռ օ- գոստոսի վերջերը և սեպտեմբերին պէտք է անեն: Ասպետական այդ ողին որքան էլ սազ գայ Գօն-Ղիխուսին, այնուամենայնիւ զա հաստատու- թիւն չէ այն բանի, թէ պէտք է թշնամու՛ յայտնես քօ անելիքը: Գա նմանում է այն մի- ամտութեան, որով նշանաւոր է այն զիւղացին, որն աւազակներից թաքնելով, երբ տեսնում է, որ նրանք իրան չեն գտնում, յանկարծ յաղթա- կան կերպով պոռում է և աւազակները տեղն իմանալով՝ վրայ են հասնում ու կողոպտում: Յուցամուլութեան ախտը դեռ մեծ է մի կարգ հայերի մէջ: Եւ ի հարկէ, եթէ ճշմարիտ լուրջ ձեռնարկի պատրաստութիւն լինէր, լուրջ գործի- չը երբէք չէր պոռալ ամեն տանիքների զլիսով, իր գաղտնիքը երևան հանելով: Գա ապացոյց է միայն, որ յեղափոխական գործն իր ամբողջ ծան- րակշռութեամբ ու պատմական նշանակութեամբ կշռում է շատ թեթեւամիտ կերպով և երեսա- ները կրակի հետ են խաղ անում:

Մտածեցէք լուրջ կերպով: Կարծում ենք ազգային դատն այնքան մեծ ու սուրբ է, որ ան- կեղծ յեղափոխականը կարող է, պէտք է և պարտաւոր է անձնատուր չը լինել միմիայն իր ումբարկական շարժածքների զմայլանքին, առանց մտածելու, թէ ինչ հետևանքներ կարող են ա- ուջացնել այդ շարժածքներն ազգային դատի և ժողովրդի վերաբերու-թեամբ: Չէ՞ որ միմիայն մի կարճատև ցուցամուլ փայլի ու աղմուկի համար չեն կարող գործադրել այդ շարժածքները, որպէս նաև խնդիրն ութ-տասը յեղափոխականների ան- ձնազոհ լինելու յատկութեան մէջը չէ (յեղափո-

խականներ, որոնք, սակայն, եւրօպական թերթերի ասուլիսներ, տանջանքների տակ, ընկերների անուններ են աւել և յայտնուածիւններ արել): Չէք հերքել, անշուշտ, որ կայ մի բարձրագոյն շահ, ազգի վրկութեան խնդիրը, որի առջև պէտք է խոնարհեն ամենքը՝ սկսած ճշմարիտ գործիչից մինչև ամենամոռնի ամբիջի օնի ստը, սնափառը: Ուրեմն, մի քիչ խօսակցենք:

Կախ և առաջ թողնենք մի կողմ այն, որ դրօշակեաններն իրանց ամբողջ գոյութեան ընթացքում միայն երկու «գործ» արած լինելով, դրանցից մէկը, անցեալ տարւայ անտեղի, անժամանակայարմար ու չը մտածւած փորձը — որն այնքան զարհուրելի արհաւիրքներ թափեց Վ. Պօլսի հայերի դիւին՝ տասնեակ հազար կոտորածով, — արդէն դառնապէս ապացուցեց, թէ ռքմբարկութեան դիմելը յուսահատութեան ու անկարողութեան նշան է և թէ դրա գործադրութեան ձևերն էլ արդարև միայն երևան հանեցին զարմանալի տկարութիւն ու անկարգութիւն դրօշակեանների կազմակերպութեան մէջ, կազմակերպիւն, որը կարծես իսկի չը կայ էլ: Թողնենք մի կողմ, որ նրանց նաև երկրորդ «գործում», այս վերջին անգամ, նոյն այդ բանը ևս աւելի աչքի ընկաւ, և մենք մնացել ենք ապշած ձեռնարկի միամիտ ձևերի և կարգադրութեան վրայ: Չեռնարկողները կարծես որոշած ու մասնաւորած էլ չէին, թէ իսկապէս ինչի՞ և որի՞ դէմ էին ուղում ուււրը ձգել: Կարծես նրանք որոշել էին միայն մի բան — ուււրերը ձգած լինել, և դրա համար էլ բաժան-բաժան էին արել իրանց գործողութեան կէտերը, ասես թէ իբր շատ կարևոր էր այն, որ ուււրերը մի քանի տեղեր պայթէին: Թողնենք այդ ամենը, որոնք սոյն յօդուածի մէջ մեզ հետաքրքրեցին միայն անցողակի կերպով, և նորից հաստատութիւն հանդիսացան այն գործնական պարզ ճշմարտութեան, թէ որ և է յեղափոխական ձեռնարկն իր աջողութեան համար պահանջում է իրան համաչափ ոյժ, կանոնաւորութիւն ու կազմակերպութիւն:

Հիմա տանք ուղղակի սոյն հարցը, որ մեզ շատ է շփոթում. — ինչի՞ էք ուղում հասած լինել՝ ուււրեր ձգելով: Ինչո՞ւն է դրա նպատակը, դրա իմաստը: Բողոք է դա արդեօք կառավարութեան դէմ. էլ ինչո՞ւ էք այն ժամանակ ուււրեր ձգում և ոչ զէնքերով ցոյց անում: Եւրօպայի՞ ուշադրութիւնն էք ուղում դարձնել հայկական դատի վրայ սրա լուծման համար. էլ ինչո՞ւ կրկին այդ պարագայում ուււրեր էք ձգում, այն էլ օսմանեան բանկայում, եւրօպական մի հաստատութեան մէջ, այդպիսով մեծ պետութիւններին գրգռելով հայերի դէմ, և չէք գործադրում որ և է ուրիշ նը-

պատակայարմար ձեռնարկ: Պատժել էք ուղում սուլթանի կառավարութեան: Բայց դուք միայն սպանում ու վերաւորում էք մի քանի զրուսպան ու ոստիկան: Խօստապահանջ չէք և ոչինչով դոհացող էք, եթէ ձեզ բաւարարութիւն է տալիս այն, որ ձեր ուււրը... գէթ դոնապաններ սպանեց: Կարծում էք Վ. Պօլսը տալիս ու վրայ անել, սուլթանին վախեցնել: Անցեալ տարւայ ձեր փորձից քաջ դիտէք, որ Վ. Պօլսը տալիս ու վրայ անել միայն ինքն սուլթանն է կարող, օգուելով որ և է պատուակից և երբ հարկ է տեսնում. օրինակ՝ — հայերի կոտորածով. իսկ այս տարի կոտորած անելն իր շահին հակառակ լինելով, նա միայն հարկ է տեսնում հարկւրաւոր ձերբակալութիւններ անել և այդ է անում: Սակայն շատ լաւ ենթադրում ենք, որ այդ ձեր նպատակներից մէկը լինի, կամ հէնց դրանք բոլորն էլ լինեն ձեր ձեռնարկի նպատակէտը, բայց դրձեալ չենք հասկանում, թէ ինչո՞ւ անպատճառ ուււրարկութեամբ և ոչ այլ նպատակայարմար միջոցներով: Արդեօք զէնքերի, հրանիւթերի մէջ ամենից շատ ուււրը հաւանեցիք. կամ թէ՞ մրտածեցիք, որ ուււրերով քիչ մարդ շատ բան կանեն. կամ թէ ուււրերի գործածութիւնը թիրքիայում նոր բան լինելով, ուղեցիք նոր մօզայի ներմուծող լինել: Չը մտածեցիք միթէ, որ ամեն զէնք ու ամեն պայթուցիկ գործածել կարող է միայն ընդհանուր կուրի, ընդհանուր ընդհարման, ապստամբութեան միջոցին, երբ թշնամու ամեն տեսակ ոյժերի դէմ պէտք է ջանալ ունենալ համապատասխան ոյժեր: Կուբան ձեզ օրինակ: Չը մտածեցիք միթէ, որ ամեն ժամանակ, ամեն պարագային և ամեն-մի փափագի համեմատ չէ կարելի գործածել անխտիր կերպով խելքին փշած միջոցը՝ առանց սուլթու, առանց մնայու անպատիժ, առանց չարաչար հետեւանքների: Այն՝ որ վտանգում էք յեղափոխական կազմակերպութիւնները, բարդում ու խիստ կուտակում են նորանոր դժւարութիւններ դրանց անհրաժեշտ նախապատրաստութիւնների առաջ. այն՝ որ անգամաւրում էք յեղափոխական գործը. այն՝ որ շեղում էք իր բուն ուղից հայկական դատը և նրա իմաստի մասին շփոթում էք հասարակական կարծիքը:

Կայ նաև խնդրի միւս կողմը: Այնպիսի մի ժամանակ, երբ սուլթանը հանգստանում է իր աժանագին յաղթութեան դափնիների վրայ. երբ նա կարողանում է իր ամեն-մի կամքն իրագործել տալ իրան բարեկամ դարձած մեծ պետութիւններին. երբ այդպիսով կարողացաւ մի առժամանակւայ համար ամբացնել իր գահը. երբ միւս կողմից ստեղծւել են բոլորովին տարբեր քաղաքա-

կան հանգամանքներ և մեր ազգային ներքին զբ-
 րութիւնը դարձել է բարդ և հայկական դասն էլ
 զբւեղ է խիստ անորոշ ու դժւարին հողի վրայ-
 երբ այդպիսով յեղափոխական գործն՝ իր նպա-
 տակի իրազորման համար՝ պէտք ունի հսկայա-
 կան զօրութեան և հմուտ կերպով մղւած, վը-
 ճուական ու անպայման կերպով յաղթանակող ճա-
 կատամարտի, որ պէտք է լինի վերջինը, — այդ-
 պիսի հանգամանքներում ամեն տեսակ մանր ցոյ-
 ցերը, ամեն տեսակ բռնկումները, ամեն տեսակ
 մասնակի շարժումները կապացուցեն զրանց հեղի-
 նակների կամ ցուցամոլութիւնը, կամ թեթամիտ
 վերաբերութիւնը դէպի ազգային փրկութեան գոր-
 ծը, և, վերջին հաշւով, պատճառ կը լինեն յե-
 ղափոխականների պարտութեան և թշնամու աւե-
 լի ու աւելի աջողութեան: Այսուհետեւ այլ ևս
 անտեղի, անժամանակայարմար, իրանց պատմական
 պաշտօնը յրացած են ամեն ցոյցերը, ամեն մասնակի
 շարժումները: Նրանք յայտնի պարագայում վնաս-
 սակար էլ կարող են լինել: Ազգային զրութիւնն այս-
 օր օրհասական է. օրհասական է նաև ազգի գո-
 յութեան ու փրկութեան խնդիրը: Թող յեղափո-
 խականներս, այս տեսական սոսկալի ճշնագամի մի-
 ջոցին մանաւանդ, կանգնած լինենք մեր սուրբ
 կոչման բարձրութեան վրայ: Ղինկ լուրջ և ոչ
 թեթեւամիտ, լինել գործիչ և ոչ ցուցամոլ, լաւ
 կշռել ներկայ քաղաքական պայմաններն ու նրանց
 նշանակութիւնը և ոչ թէ Գօն-Վիխօտի պէս քա-
 մու ջրաղացների հետ կուել և Գօն-Վիխօտի պէս
 էլ ջարդուել, — ահա մեր խորհուրդը, մեր խըն-
 դիրն ամեն անկեղծ հայ յեղափոխականին: Թող
 յեղափոխական բոլոր ազնիւ կամքերը և անկեղծ
 մտքերն իմանան, որ յեղափոխականներիս առաջ
 այսուհետև միայն մէկ ուղի կայ, առանց շեղումնե-
 րի, առանց ոյժերի մասնակի սպառումների. — ա-
 պատմութիւն, որ պէտք է կատարուէ առաւել կամ
 նւազ ընդարձակ ծաւալով, ներքին և մանաւանդ
 արտաքին քաղաքական զրութեան որոշ բարե-
 յաջող ժամանակին: Հսկայական աշխատութիւն
 է պէտք, սակայն ստիպողական, արագ ու ժրջան
 կերպով առաջ մղւած, որպէսզի յարմար առի-
 թին անպատրաստի չը լինենք: Թող յեղափո-
 խական բոլոր ազնիւ կամքերը և անկեղծ մտքերն
 ունենան այսուհետև միայն մէկ ուղղութիւն, մի-
 անման գործունէութիւն, մի-միակ յատակադիժ,
 մէկ ընդհանուր ընթացք, մէկ ընդհանուր տակտիկա:
 Հայն անցաւ անպատմելի արհաւիրքների բովեց,
 բայց ահաւոր և վերջին ճակատամարտը դեռ նրա
 առաջն է, մօտ ապագայումն է: Աւել դէպի այդ ա-
 պագան կերթանք յուսալի սրտով ու եռանդով,
 և այդ ապագան կը լինի վրիժառու, վարձատրող
 ու պայծառ, եթէ միայն հայ անկեղծ յեղափո-

խականները լաւ ըմբռնեն ու լաւ կշռեն այն գոր-
 ծըն ու այն պարտականութիւնը, որ հայութեան
 պատմական դատը պահանջում է նրանցից:

Գործենք, բայց զիտենանք, թէ ինչպէս գոր-
 ծենք. երթանք առաջ, բայց զիտենանք մեր ու-
 ղին:

ԱՐԻՆԱԼԻՑ ԸՆԳՀԱՐՈՒՄ

ՊԱՐՍԿԱ-ԹԻՒՐԳԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԼԻՍԻՆ.

Պուստ-Պարսկական սահմանագլխից մեղ հաղոր-
 դում են. —

Հնչակեան «Շանթ» գունդը Աղբալի մօտերը ար-
 իւնալից մի պատահական ընդհարում է ունենում
 խիստ բազմաթիւ զինւած քիւրդերի հետ: Առիւթ
 աւում է երկար: Առէի ամենատար և ճակատագրական
 րոպէում «Շանթ» գնդին օգնութեան են հասնում
 Վասպուրականի Հնչակեան խմբերը, ինչ ժամանակ քրո-
 դական բանակի թիւն էլ սուտարացել էր հետզհետէ
 կուի վարը հասնող նորանոր քիւրդ խմբերով: Քիւրդերը
 յաղթահարւած նահանջում են: Հնչակեան խմբերը ա-
 մենայնդուզն կերպով յարձակում են քիւրդերի վրայ,
 իրանց շրջապատող շղթան ձեղքում են և մեծ կո-
 տորած տալով թշնամու, անցնում են առաջ: Հըն-
 չակեան խմբերը յաղթական մտնում են Վասպուրա-
 կանի խորքերը: Հայերը կորցնում են միայն մի քանի
 հոգի, իսկ քիւրդերի կորուստը անհամեմատ աւելի շատ
 է:

Առէի ժամանակ սահմանագլխից անցնում է Գրօ-
 շակեան մի խումբ 150 հոգուց բաղկացած, որը լը-
 սելով Հնչակեանների ընդհարումը քիւրդերի հետ և
 միաժամանակ ծագած լինելով իրանց մէջ ներքին խը-
 ուովութիւններ՝ սահմանագլխից դառնում են յետ:

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԻՑ.

28 Օգոստոս 97.

Սուլթանը օրէ օր զօրք և ուզումալթերը կուել-
 ցընէ յունական հողերի վրայ, ուր արդէն իր բանակ-
 ները կը մնան: Հասարակութեան մէջ զրոյց կը պտտի
 պատերազմը վերասկսելու մասին: Տիմար Խալիֆան մի
 փոքր ազգի դէմ տարած յաղթութիւններով հարբե-
 ցած՝ մեծամեծ երազների մէջ է և միանգամայն վերին
 աստիճանի հպարտ և խտապահանջ է եղած: Նա ա-
 մեն կերպով կը ջանայ օգտուիլ այս հանգամանքներէն
 և իր փտած կառավարութեան երկարատևութեան հա-
 մար նեցուկներ կը պատրաստէ: Այս օրերը հարպիսէի
 դպրոցին մէջ ձերբակալուեցան երեսուն և հինգ թիւրք
 երիտասարդ ուսանողներ, որոնք, քիչ բացառութեամբ,
 բարձրաստիճան մարդկանց զաւակներ են: Ձերբակալ-
 ուածները թիւրքական զինդանները նետուած սոսկալի
 ծեծի և տանջանքների մէջ են: Ասոնց թւի մէջ կը
 գտնուէին Քաիք փաշայի որդին և մէքլիմալը պաշը
 Ալի պէկի միակ զաւակը, որոնք առանց զինդան ա-
 ռաջնորդուելու Սարայ-Պուրնի մէջ ձկնեղու համեղ
 կերակուր դարձան:

Պէպէքի բարձունքների վրայ Բօպէրդ գօլէճի մօտ վանեցի մի կաթնավաճառ՝ իր յաճախորդներին կաթը տուած երբ կը վերադառնար՝ երկու զինւորներ կը յարձակուեն վրան, և վրով մի չուան ձգելով քարը կը տան: Սուլթանի անօթի զինւորները կարծելով թէ հայը մեռած է՝ վերջինիս մօտ գտնուած 150 գօհէկանը կանոնն և կը հեռանան: Սակայն մի քանի ժամ յետոյ կաթնավաճառը կը սթափուի և կիսամեռ վիճակի մէջ սողոսկելով, գլտորելով կը հասնի մի բընակուածիւն, ուրտեղ մի քանի մարդիկ կը դարմանեն թշուառ զոհին: Զարմանալու ո և է տեղի չը կայ հասկացողին թէ թիւրքերոյ մէջ, մանաւանդ սուլթանների քաղաքի մէջ, կեափուրների կեանքը որքան արժան է:

Արէկ իսլամութիւնը Մեփլուտի տօնը տօնեց: Մըդկիթների մէջ, ամեն կողմ բազմութիւնը լիքն էր և լուսավառութիւն կար: Զինւորական մի նուագախումբ ելլալով քէօք զնաց մեծ Մարդակերին պատիւ և զբօսանք տալու համար: Միւս կողմէ բազմութիւ թընդանօթների միանուագ ձայները օդը կը թնդացնէին: Ժողովուրդի մի մասը բոլորովին տեգիտակ այդ տօնի մասին, կարծելով թէ զարձեալ կը բացուին կարմիր կոտորածների շարքերը, սարսափահար եղած այս կամ այն կողմ կը փախչէին: Թիւրք մոլեռանգ հասարակութիւնը վերջերս արդէն սաստիկ գրգռուած է քրիստոնեանների դէմ և թելադրութեան մի փոքրիկ կայծը բաւական պիտի լինի վառելու կոտորածների հրդեհը: Ղալթիոյ կողմը, ուր կանխապէս աշխատաւոր բեռնակիրները ընդհանրապէս հայեր էին, մինչդեռ այժմ, առանց դեղի համար մի հայ գտնուելու, քիւրտեր են բոլորը: Աերջներէս մին հրապարակի վրայ կը կանչէր՝ յոյս, Աստուած սուլթան շամօի սիրտը կակղացընէր և միւս անգամ ևս հրամայէր կեափուրներին ջարդելու, որով կարողանայի մի քանի հարիւր ոսկի գրպանել և մէկէքէթ գնալ, ինչպէս ցեղակիցներէս մէկը նախորդ կոտորածների ժամանակ 200 ոսկի թալանելով ուրախ-ուրախ հեռացաւ:

Մի քանի օր առաջ Պուլկարիոյ Ֆէրտինանտ իշխանը Կ. Պօլիս եկաւ Սուլթանի հետ տեսակցութեան համար: Աերջներս, մեծ Մարդակերը, մեծ ընդունելութիւն տուաւ, միասին սեղանի հրաւիրեց, անոր կենացը բաժակ պարպեց և մասնաւոր կարեբրով Շաքիր փաշայի ընկերակցութեամբ կամուրջի վրայ շքագայելու պատիւը արաւ: Անոր Աստիօրէն ներս անցած ժամանակ սուլթանական յատուկ պատգամաւորը դիմաւորեց մինչև անոր շոգնաւը. և ինչպիսի պատիւներ որ հարկաւոր էին գործադրուեցան Ֆէրտինանտի համար: Թիւրք հասարակութիւնը անհաշտ աչքերով կը դիտէ Պուլկար իշխանի գալուստը և անոր տրուած ընդունելութիւնները: Թիւրքերը անկիւնների մէջ կը շնչէին՝ յօսան տարի առաջ մեր տիրապետութեան լծի տակ էին պուլկարները, մինչդեռ այսօր մեր խալիֆայի կողմէ մեծամեծ պատիւներ կը տրուին անոր իշխանին: Ֆէրտինանտի գալուստի մասին ղանազան մեկնութիւններ կը տան: Ոմանց ասելով իբր, սուլթանը իշխանին հրաւիրել է Պուլկարիոյ թագաւոր հաստատելու, իսկ միւսների խօսքով՝ Սուլթանը երկիւղ կրելով մի յարձակումի Պուլկարիայի կողմէ՝ իշխանին հրաւիրեց իր մօտ հաշտութեան և բարեկամութեան համար: Մարդասպանը Ֆէրտինանտին նուիրեց, հայերէ կողոպտած ոսկիներով շնուած, մի թանկագին մատանի, մի ժամացոյց իր շղթայով միասին...

Վերջերս թիւրքական պաշտօնական թերթեր կը հրատարակեն, թէ Սերպիոյ սահմանադուլը կատարեալ անդորրութեան մէջ է: Առ հասարակ այսպիսի լուրեր հասարակութիւնը հակառակը կը հասկանայ. այսինքն թէ՛ Սերպա-թիւրքական սահմանադրի վրայ խաղաղութիւնը վտանգուած է: Այս օրեր 20,000 զինւորներ Պրուսայի մէջ հաւաքելով ուղարկուեցան սերպական սահմանները:

Կ. Պօլիս շուկաները, փողոցները, ամեն կողմեր օրը ցերեկով կը գործուին ամեն կարգի ոճիրներ, ըսպաննութիւններ, գողութիւն: Նախատիւր, թշնամութիւն, հայհոյանք մահապատիւների կողմէ արդէն սովորական են դարձել: Զուճաստանի վրայ տարած յաղթանակը հպարտացուց մահամեծի հաւատարիմ զաւակներին, որոնք տակաւին քիչ առաջ, նախ քան Զուճա-թիւրքական պատերազմը, սղբացողներ էին փտած թիւրքիայի կացութեան վրայ. իւրաքանչիւր իտլամ մի սուլթան, մի հրամայող բռնաւոր է իր փողոցի կամ պազարի մէջ: Այսինքն քիւրտերի լէգէօները մըջլանի նման կը վխտան Ստամբուլի հրապարակը և, ինչպէս քիւրտիսդանի խուլ լեռների, կիրճերի մէջ կամ ճանապարհների վրայ, նոյնպէս Կ. Պօլիս մէջ, շնորհով վեհափառ տաղակապետ սուլթանի, սեփականատէրեր են կեափուրների կեանքին, պատւին, մալին և բոլոր ունեցածին: Պօլիս և ամբողջ թիւրքիոյ վիճակը խիստ վատթար է. ժողովուրդը շուարած և յուսահատութեան է մատնուած:

ԱՍՏՆՈՒ.

ՆԱՄԱԿ ԲԵՅՐՈՒԹԻՏ

6 Սեպտեմ. 1897.

(Գոստոսի առաջին շաբաթը տեղիս կառավարական պալատի մէջ տարօրինակ իրարանցում կար, որի պատճառը 1-2 ժամ թաքուն պահուելէ յետոյ, շընորհով թիւրքական գաղանապահ պաշտօնեանների, անմիջապէս երեւան եկաւ: Այդ օրէն հազիւ մի քանի շաբաթ առաջ Կ. Պօլիս տիրահոգակ Նազըմ փաշան Երուսաղէմէն տեղս կը հասնէր վախուժեան պաշտօնով: Նա դեռ իր հանգիստը չունեցած և իր շուրջը չը դիտած՝ այդ օրը Կ. Պօլիս սուլթանական մի հրաման կը ստանայ անմիջապէս, դարձեալ նոյն պաշտօնով, Գամասկոս ուղևորուել՝ այդտեղ նոր ծագած ապստամբական շարժումները և աղատական թիւրքերի խուճուկութիւնները զսպելու համար: Քաղաքիս մէջ տարածուած զոյցներին նայելով Նազըմ փաշան իր պաշտօնատեղին հասնելով, 5 օրուայ ընթացքի մէջ, ձերբակալել է 40-է աւելի տաճիկ աղատական-խառնակիչներ: Աղատական կոչուածների մեծամասնութիւնը կը կազմուի Ռէժիի և կառավարական պաշտօնեաններէն: Առ այժմ հետեանքի մասին որոշ տեղեկութիւններ չը կան, սակայն Գամասկոսի ազգաբնակչութեան վիճակը, շնորհով Նազըմի գործադրած խիստ միջոցների և գրգռութեան, հետզհետէ կը ծանրանայ և ընդհանուր սարսափը կը տիրէ ժողովուրդի մէջ:

(Գոստոսի 25-ին Նազըմի յաջորդ նորեկ կուսակալը յանկարծակի կերպով ծանապարհ ընկաւ Գամասկոսի համար և այնտեղ միայն երկու օր մնալով վերադարձաւ տեղս՝ իր պաշտօնավայրը: Ասոր պատճառը, իբր թէ Նազըմ փաշայի և Գամասկոսի զինու-

րական ընդհանուր հրամանատարի մէջ ծագած մի ծանր վէճն է, որի հետեանքը և եղելութիւնը դեռ ևս գաղտնի կը պահուի: Այդ վէճի կառգադրութեան և այդ երկու թիւրք պաշտօնեաների մէջ հաշտութիւն կայացնելու համար Կ. Պօլսէն հրաման կը գոյ տեղիս նորեկ վալիին՝ մեկնել Գամասկոս և կարգադրել այդ:

Սուլթանի տարեգարծը Բէյրութի մէջ խիստ տարօրինակ կերպով տօնուեցաւ՝ քան նախորդ տարիները: Ամեն փողոցի մէջ դրուած էր Համիտի մեծագիր պատկերը, որի մէջ սուլթանի ոտքերի տակ ընկած էին յոյների թագաւորը և յոյն զինւորների պատկերներ: Իւրաքանչիւր թիւրք, ոգևորուած, իր հրացանը կը պարպէր հելլէն զինւորների կամ թագաւորի պատկերին: Իսլամների մէջ ոգևորութիւնն ու կատաղութիւնը ծայրայեղութեան էին հասել: Այդ օրը շուկաները համարեա բոլոր քրիստոնեաների խանութները փակուած էին և հասարակութիւնը ապաստանած իր տների մէջ ահով ու սարսափով կը սպասէր օրուայ վերջանալը:

Բէյրութի վիճակը օրէ օր անտանելի կը դառնայ: Թիւրքերը վերջին աստիճան կատաղած են Յուսիս-արեւմտեան պատերազմի յաղթանակէ ի վեր. բացարձակ կերպով եւրոպացիներին կը պոսան թէ՛ «մենք, թիւրքերս, Մուհամմէտի և Գուրամի զօրութեամբ պիտի յաղթենք ամբողջ Եւրոպիայ և մասնաւորապէս Անգլիոյ:

Կ. ԱՐԾՐՈՒՆԻ.

ՎՍՏ ԲԱՐՔԵՐ

ԵՒ

ՆՐԱՆՑ ԱՍՊԵՏՆԵՐԸ.

Այն ծանր անաղողութիւնները, որ վերջին երկու տարւայ ընթացքում կրեց հայկական դատը և այն տարտամ ու շփոթ դրութիւնը, որ ստեղծուեցաւ հայերիս մէջ այդ անաղողութիւնների շնորհով, բնական կերպով առաջացրին մի նոր տրամադրութիւն, որ հակադրեցութիւն էր յեղափոխական գաղափարի դէմ առհասարակ. առաջացրին ռէակցիա: Մէկ ազգ մեծ է ու հերոս, կամ ողորմելի է ու վատ միայն փորձութիւնների ժամանակ: Հայ ժողովուրդը վերջին տարիների սոսկալի փորձութեան մէջ եթէ ցոյց տւեց մասամբ իր մեծութիւնը իր կրաւորական տոկոսութեամբ, պէտք է ցաւով խոստովանել, որ հրապարակի վրայ վխտող հայրենասէր ու յեղափոխական կարծաւորներն առհասարակ սկսան ցոյց տալ իրանց մտաւոր ու բարոյական անանկութիւնն ու ապականութիւնը, իրանց շահախնդրական ձգտումները, իրանց ստոր յատկութիւնները, որոնք աղողութիւնների միջոցին խնամքով քողարկում էին: Այդպիսով հայ հրապարակի վրայ ստեղծուեցան անաւոթ բարքեր: Եւ յանկարծից որքան շատացաւ հայ հայրենասէրների թիւը, որքան շատացան ու լեզուանի դարձան խեղճ հայ ժողովուրդի փաստաբանները, որքան մեծ ձայնով սկսան պոռալ, հայ ժողովուրդի շահերի նախանձախնդիր ներկայացնելով իրանց, աւելի լաւ ծածկելու համար իրանց անձնական ստոր շահախնդրութիւններն ու թաքուն նպատակները, և աղբայրին շփոթութեան պղտոր ջրի մէջ ձուկ որսալու նկրտել: Հայրենասիրութիւն, յեղափոխական, գործիչ,

գրանք դարձել են շատ գոյների և շատ արժանագին խօսքեր, և ինչ տեսակ բարքեր ասես ձգնում են ամփոփել այդ խօսքերում: Եւ յեղափոխական ամենազանա խմբերում ներս սպրդեցան և կան Նազըմ փաշայի գործակալներ և անձնական շահ որոնողներ: Եւ երբ այդպիսի «ազնիւ գործիչները» սկսան մատնել իրանց ընկերին, իրանց եղբօրը, դաւաճանել այն ամենն, ինչ որ առաջ իբր թէ պաշտում էին, երբ նրանք արգելքներ գտնելով իրանց ստոր դիտումների ու շահասիրութեան յագեցում տալու առաջ, օգտուում էին հասարակութեան շփոթ տրամադրութիւնից և սկսում յարձակել ուրիշների վրայ՝ հասարակութիւնն այդ ուրիշների դէմ գրգռելու նպատակով՝ և հրապարակապէս երևան հանել ներքին գաղտնիքներ ու մատնութիւններ անել, — դրանք, այդ «ազնիւ գործիչներն» ամենայն լրբութեամբ իրանց անունել սկսան ամենամեծ հայրենասէրներ, յեղափոխականներ և հա՛գիստ խղճով ձկներ որսալ ու իրանց բարձրի վրայ քննալ: Գրանք են հիմա հայ հասարակութեան մէջ ընդհանրացած բարքերը, որոնց ամենափայլուն ներկայացուցիչներն են Արփիարեանները և ալֆարիական նոր ձագուկ Տօնապետեան անուն տրգետ, անբարոյական անձի պէս անհատներ:

Այդպիսի բարքեր ուրիշ աղբերի մէջ էլ ժամանակ առ ժամանակ երևան են գալիս, և մեր մէջ նրանց յաղթահարելով այսօր, մենք, հայ յեղափոխականներս, գժբախտաբար, չենք կարող վստահ լինել, որ նրանք տեղի չեն ունենալ դարձեալ վաղը: Մէկ այնպիսի թարմ և նոր աչքը բացող հասարակութիւն, ինչպէս հայ հասարակութիւնն է, մէկ այնպիսի անփորձ և մինչև վերջերս յոյսերով լի երիտասարդութիւն, ինչպէս հայ երիտասարդութիւնն է, շատ դիւրութեամբ կարող է ընկճել ու ենթակայ լինել այնպիսի անբարոյականացուցիչ բարքերի ու ընթացքի, որոնց դիմադրելն իր ոյժից ու մաքից վեր է, և վեր է հէնց այն պատճառով, որ այդ հասարակութիւնը և այդ երիտասարդութիւնը տակաւին նոր են ոտք կոխում քաղաքական կեանքի շէմքի վրայ: Ամենազրգուշալից է այդ շէմքի անցնելը, ամենահիմնական է այդ ըրպէի մաքառումը, ամենազառն է նաև այն գիտակցութիւնը, որն այդ շէմքի վրայ և այդ մաքառման միջոցին արթնանում է նրանց՝ հասարակութեան ու երիտասարդութեան մէջ: Բայց այդ ճակատագրական ըրպէին մի և նոյն ժամանակ կատարում է պատմական մեծ գործողութիւնը մէկ ազգի մէջ, այն է՝ ոյժերի զտումն և ընտրութիւնը: Գրանք, որոնք կարողանում են դիմադրել վատ բարքերին և անպղտոր մտքով, քաջառողջ սրտով անցնել այն ըրպից, դրանք հանդիսանում են ճշմարիտ ու փորձաւոր յեղափոխականներ, մարտնչող կոչման բարձրութեան վրայ կանգնած անհատներ, որոնց ոգևորող և ուղղեցողը Գաղափարն է և միմիայն Գաղափարը և որոնց համար յեղափոխական գործը ըրպէական մի յափշտակութիւն չէ, մանաւանդ ոչ էլ անձնական շահերի գոհացման ստոր արհեստ, այլ ազնիւ ու անկաշառ մտքի քննութեան արգիւնք և անկեղծ սրտի հետ միութեամբ կապած մի վսեմ երևոյթ: Իսկ նրանք, որոնք չեն կարողանում դիմանալ ամեն — և ցաւալի է ասել՝ շատ անգամ չնչին — փորձութիւնների բովին. նրանք, որոնց մէջ յեղափոխական գաղափարը մի ներքին համոզում չէ և ոչ էլ գործը՝ մտքի դատողութեան և զգացման անկեղ-

ծուծեան մի յարատե հասկացողութիւն. և նոյնպէս նրանք, որ չունեն իրանց մէջ բաւականաչափ բարոյական ոյժ, որոնք մտաւիտ են, երկիւղով վերաբերող դէպի ամենապարզ պատասխանատուութիւն, որ կարող է ընկնել նրանց վրայ, — այդ ամենքը, որոնք սուտ մասն են կազմում, շատ դիւրութեամբ ընկճուում են վատ բարքերի ազդեցութեան տակ, կամ իսպառ չեզոքանալով և կամ թուծակի պէս կրկնելով վատաբարոյ անձերի խօսքերը և կոյրի պէս հետեւելով նրանց: Վատաբարոյ անձեր. դրանք արդէն դուրս են գալիս այդ թուլամորթ ու բարոյապէս անանկների շարքերից: Եւ դրանք զանազան կերպով աջողում են ներս սպրդել յեղափոխական ամենաազնիւ շրջանները: Եւ ի՞նչու: Յեղափոխական գործն այդ վատաբարոյների համար շահանդրական արհեստ է, յեղափոխական կուսակցութիւնը՝ չարչիական ընկերութիւն, և ամեն ինչ կենտրոնացած միմիայն իրանց ետականութեան վրայ: Արհեստը ձգտում են շահագործել անձնական շահի համար, ընկերութիւնից պահանջում են նիւթական կանոնաւոր վարձատրութիւն, յայտնի չէ թէ ինչ ծառայութիւն են արել, որ արդէն ուզում են ապրել ու... բազմանալ հասարակութեան հաշուով, և իրանց անձի շահն ու վայելքը՝ կէտ նպատակ է նրանց ամբողջ ընթացքի: Եւ ի՞նչ ընթացք, նրանք քծնում, շողորթում, ստրուկ, ձձի են դառնում այն անձերի առաջ, որոնց մտադիր են խաբել, սիրաշահել՝ իրանց անձնական ծածուկ դիտումների իրագործման համար: Բայց հէնց որ երևան է գալիս մէկ անակնկալ առիթ, որ ցոյց է տալիս այդ անբարոյականների տգեղութիւնը, հէնց որ երևան է գալիս մի մերկացնող պարագայ և այդ ջէզբիտներն ու քծնող Տարտիւֆներն այլ ևս անկարող են լինում կրել իրանց դիմակը, — նրանք յանկարծ երևան են գալիս իրանց գարշացած մտքի ու սրտի ամբողջ ողորմելիութեամբ ու տգեղութեամբ և իրանց բարոյական ապականութեամբ ու սնանկութեամբ: Իրանց երեսի դիմակը պատուելով, նրանք սկսում են, բնականաբար, ամեն ձիգ թափել դուրս պրծնելու համար այն անախորժ վիճակից, որի մէջ իրանց ընկած են տեսնում, մի վիճակ, որը սպառնում է բոլորովին մերկացնել ամենքի առաջ նրանց բարոյական ապականութիւնը: Այդ պարագայում անբարոյականները, որ յեղափոխական ասպարէզում դեռ երէկ անյայտ էին, բնականաբար գործ են դնում ամեն միջոց անխտիր կերպով՝ ուրիշների վրայ բարդելու մեղադրանքներ, որպէս զի իրանց սեփական ստորութիւնն ու յանցանքները երեւան չը գան, լրբութեան քողի տակ ծածկւեն: Եւ որոնք են այդ ուրիշները լինում: Հարկաւ, միշտ նրանք, որոնք իրանց դիրքով աչքի են ընկած, որոնք ունեն պատասխանատու դեր, որոնց գործը և ուրեմն պարտականութիւնն էլ ծանր է: Հետեւաբար, դա յարմար հող է, մանաւանդ եթէ այդ ուրիշներն, ինչպէս ամեն-մի հասարակական գործիչ, ունեն հակառակորդներ, նաև թշնամիներ, որոնք միշտ որսորդական շների պէս առիթ են փնտռում նորանոր քարկոծման: Եւ անբարոյականները սկսում են թափել իրանց հայհոյանքները, իրանց լուտանքները, իրանց զըրպարութիւնները, իրանց սուտերը, անխիղճ, անամօթ, լպիւրջ կերպով, հարբեցած միմիայն մի դիտումով. այն է՝ ծածկել իրանց վատութիւնը, ուրիշներին վատ ներկայացնելով, հասարակութեանն ուրիշի դէմ գրգռելով և այդպիսով ձգնել անգամալուծելու այն մեր-

կացումները, սր այդ ուրիշն կանէ վատերի դէմ: Եւ սկսում է հալածանքը: Ուրիշ, քաղաքակիրթ հասարակութիւնների մէջ այդպիսի հալածողների վրայ զըրպարութիւն են նայում, իսկ հայերիս մէջ, դժբախտաբար, տակաւին նրանք աջողում են երես ցոյց տալ և դեր խաղալ հասարակութեան մէջ: Դրանցից դուրս են գալիս դաւաճաններ ու մատնիչներ, դրանցից դուրս են գալիս հասարակութեան ցեցեր, դրանցից դուրս են գալիս հասարակութիւնը բարոյապէս ու մտաւորապէս ապականող դասալիքներ: Ուրիշ ազգերի մէջ այդպիսիները հալածուում են հասարակութեան, կողմից իսկ մեր մէջ... ՚ մեր մէջ, սկսած Մ. Նալբանդեանցի ժամանակներից (աւելի հեռուն չենք գնում) ամեն աչքի ընկնող և նոյն իսկ բարձր անձնաւորութիւնների գլխին ամեն թուր ու մուր են են թափել՝ նրանց ժամանակի հանգամանքների համաձայն չարախօսութեամբ ու ամբաստանութիւններով: Եւ յետոյ՝ Յետոյ նոյն իսկ այդ վատ հալածողներից ոմանք այն անձնաւորութիւնների կեանքը թուլաւորելուց զատ՝ աջողել են աղւտաբար հասարակութեան մէջ տեղ գրաւել և մինչև անգամ կոկորդիլոսեան արցունքներով մասնակցել թաղման հանդէսին այն անձերի, որոնք նրանց իսկ զոհերն էին: Եւ դա տրամաբանական է. առաջ՝ գլուխ ուտող, յետոյ՝ քէլ է կ (հոգեհաց) ուտող:

Ահա մեր հասարակական և յեղափոխական ասպարէզում առաջ եկած վատ բարքերը: Ապագայ ուսումնասիրողը կապչէ ազգային գոյութեան ճշմարտամի միջոցին առաջացած այդ երևոյթների հանդէպ և բըրբըրելով անցեալը, նա առատութեամբ կը գտնէ ստոր տիպերի նմուշներ, մեծ ու փոքր, նշանաւոր ու աննշան: Թէև անհերքելի է, որ այդ ախտը ծագած լինելով ազգային որոշ հեւանդ գրութիւնից, այդ գրութեան դարմանումն է միայն, որ կարող է ախտը ոչնչացնել, բայց մեզ համար դա մի շօշափելի ներկայ է, որ զգում ու տեսնում ենք այնքան աւելի, որքան ազգային դրութիւնն է վատթարանում և որքան մտքերն են պղտորում: Եւ մենք, յանուն յեղափոխական գործի յարատեւութեան, ստիպւած ենք մաքառելու այդ բարքերի և նրանց ասպետների դէմ ամեն օր, ամեն տեղ: Տխուր պարտականութիւն, բայց և անհրաժեշտ. յեղափոխական ցախաւելը և տաճարի խարաղանը պէտք է մաքրեն ասպարէզը յեղափոխական չարչիներից, պարիզիտներից (օտարակեր), ցեցերից ու վատերից:

Վերջերս էլ այդպիսի մի տիպ երևան եկաւ յանձին Պտ. Տոնապետեան անուն մէկի, որ ժամանակին ղինուրագրութիւնից խոյս տալու համար՝ Վովկասից փախչելով Վ. Պօլիս, այդտեղ ծառայում էր սուլթանապաշտ «Արեւելքի» խմբագրութեան մէջ: Երա համար այսօր իր անունը «Հնչակում» տպագրւած տեսնելն իսկապէս մեծ պատիւ է, թէկուզ այդ անւան կից դրւած լինի նոյն իսկ թշուառական ածականը: Պոլսական կասկածաւոր «կրթութեան» անթիւ այլանդակներից մէկը, ժամանակին թղթակից Մ. Թիւթիւնձիէֆի և բարեկամ ու բարոյական աշակերտ Արփիարեանի, նա հէնց այս վերջինի մասին «Հնչակում» յայտարարել է — մի տարի դեռ չը կայ — թէ իր մատնողներից մէկն էր, և դա՛ հէնց այն նամակում, որի մէջ նա խստօրէն պարսաւում էր Չերազին՝ իբրև դաւաճանների պաշտպանի: Միայն վերջին տարին մտած Հնչ. Վ. — թեան մէջ, որի կենտրոնի առաջ նա գիտէր միայն քծնել, իր անբարոյական, որպէս նաև շահանդրական ընթացքի պատճառով ար-

տարւեցաւ Կուսակցութիւնիցս: Անձնական թշնամութեամբ դրդւած այդ վերջինի դէմ՝ այսօր այդ նորատեսակ տխուր ասպետն արդէն նոյն արտիարականութեան ծառան է և Չէրազի գործիք: Մենք չենք զարմանալ, եթէ նա մէկ ուրիշ խմբակում էլ կծկւի: Հայկական դատի և հայոց ազգի ներկայ շիտթ ու պղտոր ժամանակների ստորաբարձ, տգէտ ու բախտախնդիր վիժլածքներից է նա: Եւ այդպիսիքը չը պիտի տեղ ունենան յեղափոխական ասպարէզում:

Ա.

ՅԱԻՏԵՆԱԿԱՆ ՍՈՒՏ ՊԱՏԳԱՍԱՒՈՐԸ.

Մինաս Չերազը, որ իր ողորմելի գրչով անկարող է եղել մի խելօք տող գրել մինչև օրս և միայն հոսոսական ճարտարախօսութիւն է ցոյց տուել այն ժամանակ, երբ այդ գրչով իր ողորմելի «l'Arménie»-ում պաշտպանել է այն հայերին, որոնց ինքը մի քանի տարի առաջ նոյն իր թերթում դաւաճան ու մատնիչ էր հրուշակել, — այդ Մինաս Չերազն այսօր իր գրիչը ծառայեցնում է սուլթանի, հայութեան թճրագործի, շահերի պաշտպանութեան: Դա ոչ միայն անսպասելի չէր, այլ և անխուսափելի է Չերազների պէս անկղբաբուհի, անհամոզում, ջեղհիտական ուղղութեան տէր մարդկանց համար: Այն ժամանակ, երբ հայ ժողովուրդն արեան ու թշուառութեան մէջ է խեղդւում, Չերազներն, իրանց երեւակայում են Կ. Պօլսի պատրիարքարանի, Միացեալ և այլ ընկերութիւնների և երեսփոխանական ժողովների բակում մղւած աճնական ինտրիգների ասպարէզում: Չերազներն այդ ասպարէզում մի-մի հերոսներ են, և միջնադարեան ասպետի կեղծ դիմակը փոխած ազգասիրականի, կարտօնէ թերթով իրար են հարւածում: Ազգային տրեան ասպարէզն էլ նրանք այդ բակի տեղ են ընդունել և դարձրել են իրանց անձնական շահամոլութեան, չարամիտ նախանձի ու թշնամութեան ասպարէզ: Չերազները կարող են պարծենալ, նրանք ստեղծել են Տօնապետեանների պէս տխուր սրիկաներին, որոնք իրանց ուսուցիչների արժանի աշակերտներն են, նրանց յաջորդները, նրանց «անմահ գործերի» շարունակողները: Եւ ահա ամիսներից ի վեր Չերազն իր դատարկ թերթում հիւրասիրում է այն բոլոր ծիծաղաշարժ ածականները, այն բոլոր կինտօյական ամբաստանութիւնները, պօլսական հոսոսաբանութիւններն ու կէկէլական, պառւակական բանբասանքները, որ ամեն-մի դուրս պրծած սրիկայ ու հացկատակ, պատառւած տեսնելով իր դիմակն, ուղղում է «Հնչակի» և Հնչակեան Կուսակցութեան հիմնադիրների դէմ: Չերազը թող իր չափովը չը չափէ մեզ: Այդ սրիկաների ստորութիւններն ու ստախօսութիւնները և աղւէսական ազի խաղացները հիմա մեր դէմ՝ նոյնչափ մեր զգւանքի ու արհամարհանքին են արժանանում, որքան և ամիսներ, մի տարի առաջ այն ամեն շողորթութեանութիւնները, որոնցով նրանք երեւակայում էին մեր աչքին իրանց սիրելի դարձնել: Տխմարներ. կարծում էին, թէ այդպիսով կաջողեն իրանց անձնական շահերին գոհացում տալ: Ստորաբարձներ, որոնք մեր արդար զայրոյթին ու զգւանքին հանդիպելով և տեսնելով, որ իրանց պօլսական ու ջեղհիտական խաղերով իրանց թաքուն նպատակին չեն հասնում, յետոյ երեւան եկան իրանց ամբողջ գարշելի էութեամբ և սկսան

քարկոծել այն, ինչ առաջ հաւատացնում էին, թէ կուռքի պէս էին պաշտում: Դրանք են՝ ինչ-որ Արփիարեաններ, Տամատեաններ, Տօնապետեան և դրանց նմանները:

Եւ ապա այն մարդը, որ ամբողջ տասը-քսան տարի հայութեանը հրապարակապէս ամենայն լրբութեամբ շարունակ խաբում էր, թէ ինքը Խրիմեանի և Նար պէյի հետ միասին պատգամաւոր էր Բերլինի վեհաժողովի ժամանակ. այն մարդը, որ այդ հրեշաւոր ու պոչաւոր սուտով ամբողջ եթէ տարի կերակրում էր նաև եւրօպացիներին՝ իր ծիծաղաշարժ «l'Arménie»-ի ճակատին միշտ գրելով իր մասին՝ «Նախկին Հայ Պատգամաւոր Բերլինի վեհաժողովում», այն մարդը, որ «Հնչակի» մերկացումներից և «Ապտակի» ապտակների տակ ի վերջոյ ամօթահար եղած՝ իր թերթի ճակատից, միայն այս տարի, վերջապէս ըստիպեցաւ ձգել իր պատմական անամօթ խաբեբայութեան դրօշը, — այդ մարդն ահա այսօր իր թերթում նաև լայիս է, որ «Հնչակն» ուղում է նրան «բարոյապէս մեռցնել»: Օ՛ յաւիտենական սուտ պատգամաւոր հայոց ազգի, բարոյապէս կարելի է մեռցնել միայն բարոյականի տէր մարդկանց. իսկ դուք և ձեզ նմաններն այդ չունէք և երբէք էլ չէք ունեցել: Եւ նախ քան այդ ասէիք և ուրիշների վրայ յարձակէիք՝ լաւ կանէիք դուք ինքներդ ձեզ վրայ նայէիք հայելիում, գուր, որ այսօր ձեր գրիչը սուլթանի շահերին էք ծառայեցնում:

Արդարև, «l'Arménie»-ի ներկայ տարւայ օգոստոսի համարում խմբագրական առաջնորդողի մէջ կարգում ենք հետևեալը. —

«Մենք, ուրեմն, կը հրաւիրենք հայ տարագրները հարստարիւ ամեն քաղաքական եւ նոյն իսկ վարչական ինքնավարութեան նախագծերէ: Ընդհանուր քարոզողութեանը օսմաննայն կայսրութեան համար բաւական են Թիւրքիայի հայերը քարեկեց դարձնելու: Մի քարոզողութեամբ վարչութիւն կատարեալ դրախտ է (délites — ամենամաշոյշ վայելք) հայ ՌԱՅԱ-յի համար: Յատուկ չարտուս ոչինչ ալ պէտք չէ, որպէսզի ամենց դէմ չը զորոգուին տեղական միւս ազգաբնակչութիւններու նախանձը ու ատելութիւնը. ամեն քան թող ընդհանուր ըլլայ իրենց, չարտուս, բոլոր հայրենակցները հետ միասին, որ ցեղերով, լեզուներով ու կրօններով տարբեր են իրարմէ»:

Ճամանակին, սրանից միայն մէկ-երկու տարի առաջ, այդ լիզուն գործածողը կը քարկոծէր հայ հասարակութեան կողմից, իբրև թրքասէր և սուլթանի շահերի ու քաղաքականութեան պաշտպան մէկը: Իսկ այսօր, երբ աղբային դատի անաջողութիւնների շնորհով, ներկայ ընդհանուր րեակցիայի (réaction) միջոցին, սկսել են քարկոծել նրանք, որոնք իրանց սրբտում հաստատ ու հաւատարմաբար պահել են յեղափոխական ազատարար գաղափարը և չեն ընկճւում ձախորդութիւնների տակ. այսօր, երբ այդ րեակցիայի շնորհով դիմակաւորներն այլ ևս ձեռնտու չեն տեսնում դիմակն իրանց երեսին պահել և երեւան են գալիս իրանց աղտոտ սրտով ու թաքուն մտքով. այսօր, երբ դրանք փրփրադէզ բերանով ձգտում են հալածել ուրիշներին, որոնք իրանց հաստատուն համոզումով ու որոշ դիրքով տակաւին արգելք են հանդիսանում այդ վատերի առջև, նրանց չը թողնելով մոլորեցնել հասարակութեանը, — այսօր այդ վատերը լեզուսրբար դաւաճանում են ազգային դատը և լիտիաբար էլ պարծենում իրանց դաւաճանութեամբ, ներկայացնելով այդ իբրև մեծ քաղաքագիտութիւն ու ճշմարիտ աղբասիրութիւն: Եւ այդ նորատեսակ հերոսների ամբոխում

ով էր կոչւած հայերին հրաւիրելու հրաժարել ա-
մեն «քաղաքական և նոյն իսկ վարչական ինքնավա-
րութեան նախագծերէ»։ Մէկ Մուրատ բէյը, որ այ-
սօր դաւաճան է հանդիսացել և սուլթանից փաշայի
տիտղոս ստացել, մէկ էլ... Մ. Չերազ և իր նման-
ները և իր աշակերտները։ Ո՞վ կարող է փորձել հա-
յերին համոզելու, որ «բարենորոգումները բաւական են
թիւրքահայերը բարեկեց դարձնելու»։ Մէկ՝ դաւաճան
Մուրատ բէյերը, որոնց «Ծրագիրն» է այդ, մէկ էլ...
Մ. Չերազ և իր նմանները։ Ո՞վ կարող է սքանչանալ,
թէ միայն «բարենորոգւած վարչութիւն մը կատարեալ
դրախտ է հայ ՌԱՅԱ-յի համար»։ Մէկ՝ դաւաճան
Մուրատ բէյերը, որ ուայա անունն էլ տալիս են հայե-
րին, մէկ էլ... նոյն Մ. Չերազ և իր նմանները, որոնց
համար հայը ուայա է։ Ո՞վ կարող է ճգնել հայերին
վախեցնելու այն արիւնալի առարկութեամբ, որը սուլ-
թանն ինքն էր գործածում տէրութիւնների առաջ
արդարացնելու համար իր արած սոսկալի ջարդերը։
Այդ առարկութիւնն էր հետեւեալը. — «Յատուկ հա-
յերուն համար ոչինչ ալ պէտք չէ, որպէսզի անոնց
դէմ չը գրգռուին տեղական միւս ազգաբնակու-
թիւններու նախանձն ու ատելութիւնը»։ Արիւնահե-
ղութեան այդ սպառնալիքի առարկութեամբ է սուլ-
թանը ճգնում թաղել հայկական խնդիրը, և այդ
առարկութիւնն իր կողմից գործածելով է, որ Չերազը
ձայնահեղում է հայ ազգի Մարդասպանին։ Եւ շարու-
նակելով սուլթանական առարկութիւնը, ո՞վ կարող է
այնպիսի յայտարարութիւն անել թէ՛ «Յատուկ հա-
յերի ոչինչ ալ պէտք չէ, այլ ամեն բան թող ընդ-
հանուր ըլլայ օսման և հողի հայրենակիցներուն»։
Ինչհարկէ միշտ և միայն նոյն հայատեսաց և օսման և
հայրենասէր դաւաճան Մուրատ բէյերը, իսկ հա-
յերի մէջ միշտ և միայն նոյն Մ. Չերազ և իր նման-
ները, որոնք այժմ դարձել են օսման և հայ-
րենասէրներ։ Եւ մէկ անհանգիստ երազի մէջ Չե-
րազը տեսած լինելով Մուրատ բէյերի դափնիները և
փաշայական տիտղոսով վարձատրուած լինելը, զարթնելով
շտապում է իր վեհափառի կառավարութեան ամե-
նախնային հպատակութեամբ համոզել ու ազաչել, թէ՛
«օսման և տէրութեան շահն է պահպա-
նել իր հպատակներին, առանց աղբի և կրօնի
խարութեան, կեանքը, պատիւը և ինչքը» («L'Armé-
nie» սեպտեմբերի թիւ)։ Ամեն-մի նոր քսմի նոր
հոսանք է բերում Չերազների ուղղում, և մենք զար-
մանում ենք, թէ ինչպէս վեհափառ սուլթանը մի
Ձեւալէդդին փաշա էլ իր կողմից յատուկ պատ-
գամաւորի դերով չէ ուղարկում Չերազի մօտ... Մէ-
թէ սուլթանը Չերազին «մարդու տեղ չէ դնում»,
ինչպէս ասում է ժողովուրդը։

Այդ է Չերազը, և այդպէս են իր բոլոր մեծ ու
պտտիկ աշակերտները։ Եւ այս ասողը միայն «չնչակն»
ու «Ապտակը» չեն, այլ և ուրիշները։ Վիեննայի
Մխիթարեանց Միաբանութեան «Հանդէս Ամսօրեան»,
որ ամենքին յայտնի է, թէ որքան զգուշաւոր է և
կռիւ անել բոլորովին չէ սիրում, մինչև իսկ նա, իր
ներկայ տարւայ Օգոստոսի համարում, շատ բնորոշ,
ամփոփ ու ճշմարիտ կերպով պատկերացնում է Միւսաս
Չերազին։ Հարկաւ, վերև մեր առաջ բերած փաստե-
րից յետոյ բոլորովին բնական է, որ այդ յաւիտենա-
կան սուտ պատգամաւորը սուլթանի հայերէն օրգան
տաճկամուլ «Իւլգանդինի» աշխատակից լինէր։ Այդ

թերթում հայ հայրենասէրներին միշտ զօքբա հայ-
հոյում են և վեհափառ սուլթանին փառաբանում։
Այդ թերթի սիւնակները ճիշդ Չերազի տեղն է։
Միայն զարմանալի է, որ Չերազն ինքը՝ մի տարօրի-
նակ թիրիմացութեան շնորհով՝ գտնուում է Ղօնդօ-
նում և ոչ իր գեղածիժաղ Բօֆօրի պիլին։ Այս-
պէս «Հանդէս Ամսօրեային» Կ. Պօլսից գրում են հե-
տեւալ՝ «Իտողութեան մ' առթիւ» վերնագրով. —

«Իւլգանդին» օրաթերթը, որուն, քանի մը պարագաներու
մէջ բնած ուղղութիւնը ապագայ քննադատութեան կը թողուցը,
գի մի գուցէ... ինչ 202 թիւն մէջ «Հանդէս Ամսօրեային» (կող-
մէն) պ. Մ. Զ. ի մէկ ուսումնասիրութեան (?)*) մասին գրած
քննադատութեան վրայ կը յարձակի յախուռն ու միտած գա-
ղափարով մը։ Պ. Խմբագիրը սա կէտը թող լաւ գիտնայ թէ
անցած են այն քարեպաշտ (?) ժամանակները ուր կը հաւա-
տայինք միամտօրէն կեղծիքներու և զրոյցներու որոնք մեր ա-
մէն կարգի համոզումներու հիմունքը կը կազմէին, և որ ցա-
ւալին է մեր ազգ. դաստիարակութեան խարխուլը նկատուած
էին։ «Հանդէսի» մէջ գրուած, թարգմանուած և նաեւ մծու-
յարգ Միաբանութեան և ուրիշներէն հրատարակուած «Աք-
զարու գրոյցին» ու նմաններուն վրայօք գիտնական քնն-
նադատութիւնները չենք ուզեր նորէն կրկնել։ Միայն կը
ցաւինք՝ որ պ. Մ. Զ. այնպիսի գիտնական կենդրոնի մը մէջ,
հակառակ երկարամտայ փորձութեան, չէ՛ կրցած օգտուիլ դա-
րուս գիտութեան ձեռք բերած արդիւնքներէն։ Տես իր երակա-
նութիւն։ Այդ իբր քաջ պատմագէտ համբաւուածներ, այ-
սօրուն օրս, գիտութեան առջն բան մը չէ՛ն արժեք։ Մեր
Պօլսոյ գրական հրատարակը, վարժարաններու և ազգ. շքո-
չանակներու մէջ, իւրաքանչիւր քայլափոխիւր, այդ տեսակ
ինքնա կող պատմագէտներու, բանասէրներու, գիտնական-
ներու լիզէնսի մը կը հանդիպի։ Ամէնքն ալ ողորմելի գը-
լուկներ, սուտ ազգասիրութիւնը իրենց վահան ընտրած՝ ար-
գելք կը յարուցանեն ծմարտին, իրականին և օգտակարին
դէմ։ Ահա ասոնք են մեզ առաջնորդողները... Բայց ի՞նչ
ընեն խեղճօրը, ատով միայն կրցած են միջն չել հի-
մայ իրենց գոյութիւնը սրաշխաւորել»։

Պէ՛հ, Չերազ, այդ խոսողը «չնչակը» չէ, որին
ձեր ընթերցողներին ներկայացնում էք իբրև ձեր թըր-
նամի, մի բան, որ իրական չէ, որովհետև «չնչակը»
չէ կարող թշնամի լինել դէպի նրանց, որոնք արժանի
են նրա նողկանքին ու ծաղրին միայն։ Այդ խոսողը
«Հանդէս Ամսօրեային» է, որի հետ միասին մենք էլ
քաջ գիտենք, որ ձեզ պէս «ինքնակող զպատմա-
գէտներ, բանասէրներ» և այլն Կ. Պօլսի փողոցներում
դէ՛գէտներով են վստում և որ «ազգասիրութիւնը
ձեզ համար վահան է արգելք լինելու ճշմարտին»,
քանի որ «խեղճերդ ատով միայն կրցած էք ձեր
գոյութիւնը երաշխաւորել»։ Եւ այդ բոլորից յետոյ
որքան ձեզ սա զ չի գալիս սրախօսելու փորձ անել,
թէ «Ապտակն» ու «չնչակը» «ծաղրական-ողբերգա-
կան» են։ Այո՛, Օսմանցի հայրենասէր, թէ ծաղրական և
... թէ ողբերգական... ձեր հասցէին։

*) Ստորագծած բառերը և հարցական նշանները «Հան-
դէս Ամսօրեային» են։

Ծ. Խմբագր.

Ա Չ Գ .

— Տեղի սղութեան պատճառով քաղաքական լուրերը և
չուսակցութեանս Գանձարանը ստուցած դրամական նւիրատու-
թիւնների ցուցակը կը գետնուեն «չնչակի» յաջորդ համարում։

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ
և դրամ ու մանդատ ուղարկել հետեւեալ հասցէով. —
M. Beniard. — 22, Ormiston Road, Shepherd's Bush.
London W. [Angleterre].